ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

2023թ. օգոստոսի 30 N 337-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ «ԽԵԼԱՑԻ» ԱՆԱՍՆԱՇԵՆՔԵՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԿԱՄ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ԴՐԱՆՑ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱԲԵՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 12-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի օգոստոսի 11-ի թիվ 32 նիստի ընթացքում ՀՀ Վարչապետի կողմից թիվ 6-րդ կետով տրված հանձնարարականի պահանջները՝

որոշում եմ.

1. ՀՀ Արագածոտնի մարզի տարածքում անասնապահությամբ զբաղվող գյուղացիական տնտեսություններին «Խելացի» անասնաշենքերի կառուցման կամ վերակառուցման և դրանց տեխնոլոգիական ապահովման ծրագրի շրջանակներում աջակցություն ցուցաբերելու նպատակով ստեղծել աշխատանքային խումբ՝ համաձայն հավելվածի:
2. Աշխատանքային խմբի ղեկավարին՝

2.1 Ամենօրյա աշխատանքային ռեժիմով, քսանհինգ օրվա ընթացքում այցելել ՀՀ Արագածոտնի մարզի գյուղեր, հատկապես՝ հեռավոր, հանդիպել բոլոր այն գյուղացիներին, ովքեր զբաղվում են անասնապահությամբ և իրազեկել նրանց փոքր և

միջին «Խելացի» անասնաշենքերի կառուցման կամ վերակառուցման և դրանց տեխնոլոգիական ապահովման աջակցության ծրագրի իրագործման ձևերի ու հնարավորությունների մասին և ցուցաբերել աջակցություն՝ այդ ծրագրից օգտվելու համար:

2.2 Մինչև 2023 թվականի սեպտեմբերի 22-ն ամփոփել աշխատանքի արդյունքները և տեղեկատվություն ներկայացնել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետին և Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությանը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Восстановимая подпись

X

VERIFIED OCSP 8/30/2023 10:18:09 GMT+4

Подписано: MOVSISYAN SERGEY 3309890457

Ս. ՄՈՎՍԻՍՅԱՆ

Հավելված
ՀՀ Արագածոտնի մարզպետի 2023թ.
օգոստոսի 30 N 337-Ա
որոշման

ԿԱԶՄ

ՀՀ Արագածոտնի մարզի տարածքում անասնապահությամբ զբաղվող գյուղացիական տնտեսություններին «Խելացի» անասնաշենքերի կառուցման կամ վերակառուցման և դրանց տեխնոլոգիական ապահովման ծրագրի շրջանակներում աջակցություն ցուցաբերելու նպատակով ստեղծված աշխատանքային խմբի

Ս.Ազատյան - Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության պետ /հանձնաժողովի նախագահ/

Ա.Ղազարյան - Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության խորհրդական

Ա. Շուխյան - Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության գլխավոր մասնագետ

Թ.Թովմասյան - Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության բնապահպանության բաժնի պետ

Հարությունյան- Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության բնապահպանության բաժնի գլխավոր մասնագետ

Ռ. Իգիթյան- Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության «Գյուղատնտեսական ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի Աշտարակի տարածաշրջանի համաճարակաբան /համաձայնությամբ/

Վ. Սրապյան- Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության «Գյուղատնտեսական ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի Ապարանի տարածաշրջանի համաճարակաբան /համաձայնությամբ/

Մ. Մովսիսյան- Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության «Գյուղատնտեսական ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի Թալինի տարածաշրջանի համաճարակաբան /համաձայնությամբ/

Ա. Վեդեցյան- Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության «Գյուղատնտեսական ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի Արագածի տարածաշրջանի համաճարակաբան /համաձայնությամբ/

ՀՀ Արագածոտնի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղար՝

Восстановимая подпись

X

ՀՐԱՉՅԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Подписано: GEVORGYAN HRACHYA 2014650144

Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ